



ԱՐԵՎԱԿ ԿՈԼՏՍՆՑԵՍԻ ԱՅԻ
ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿԵՎԱՆՔԻ ՀԱՄԱՐ

Թմրակ Մ. Ա. ՊՈՂԻԶՈՎԸՆԻ

ԱՐԵՎԱԿ ԿՈԼՏՏԵՍԱԿԱՆ ԱՐԵՎԱԿԱՆՔԻ ՈՒ ԿԵՎԱՆՔԸ



2

1934

614.7
Դ - 32

Զ Ա Կ - Ս Ո Վ Ո Վ Վ Ա Հ
ՀՐԱՄԱՆ ՀՐԱՄԱԳՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Հ 34-Ի 614.7
Հ 2719 Դ-82
ԵՐԵՎԱՆ ԿՈԼՏՆՏԵՍՄԵՐԻՆ ԿՈՒՆԴԱԿԻՐԵԿԵՆ ԿՑԱՆՔԻ ՀԱՄԱՐ

20 JUL 2010

ԲԺԻՇԼ Մ. Ս. ՊՈՆԻԶՈՎԱԿԻ

Ազուլ-Սեվծովյան բժշկական ինստիտուտի
լեկ աշխատանքի առողջապահական կա-
փեղրայի գիտական սեկտորի վարիչ

ԱՌՈՂՋԱՑՆԵՆՔ
ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆԻ
ԿՅԱՆՔՆ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ



Ազատ քարգմ. Աստ. Պուտենց

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ЗООЛОГИИ
Академии Наук
СССР

ԱԶՈՎ-ՍԵՎՉՈՎԱՆ
ՅԵՐԿՐԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՈՂՈՑՈՎ-ԴՈՆ-1934

**1. ԱՐԵՎԱԿ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՀԱՄԱՐ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Համամիութենական հարվածային կոլտնտեսականների համագումարում, Մոսկվայում, 1933 թ. փետրվար ամսին՝ ընկ. Ստալինն ասաց—

...«Յեթե մենք ազնիվ աշխատենք, աշխատենք մեզ համար, մեր կողմանտեսության համար, այն ժամանակ մենք կհամենք նրան, վոր մի յերկու-յերեք տարվա ընթացքում բոլոր կողմանտեսականներին՝ և նախկին բատրակներին, և նարկին միջակներին՝ կբարձրացնենք մինչև ունեվորության աստիճանը, մինչևվ մարդկության աստիճանը, վորոնք կողման մթերքների առատությունից և կվարեն լիակատար կուլտուրական կյանք»:



58352-68

Отв. ред Г. А. Потенц

Тех. ред. О. Тер Давыдов

Сдан набор 11/III-1934 г.

Подписано в печ. 27/III 1934 г.

Издан. 172/3750

Об'ем 1/8 печ. листа.

Стартформат А6 105x148

Зак. з 1386

Упаковкрайлит № Б-320

Тираж 1000 экз.

Типография им. „Стакни 1902 года“ АЧПТ в г. Ростове на Дону

Կուսակցության սիրելի առաջնորդ ընկ.
Ստալինի գլխավորությամբ՝ կենտրոնական
կոմիտեի և բոլշևիկյան կուսակցության
Յերկրային կոմիտեյի անմիջական ղեկավա-
րությամբ, նախկին Հյուսիսային կովկասի
(Ներկայումս Ազով-Սևվծովյան) յերկրա-
մասը 1933 թ. ջախջախեց կուպակային սա-
րոտածը և նշանակալից հաջողությունների
հասավ կուսակցության առաջնորդի կողմից
գրված խնդիրների կատարման ասպարի-
գում՝ բոլոր կոլտնտեսությունները դարձ-
նել բոլշևիկյան, իսկ կոլտնտեսականներին՝
ունեփորներ:

Մեր յերկրամասի հարյուր հազարավոր
կոլտնտեսականներ՝ ընկ. Ստալինի նախա-
ձեռնությամբ ստեղծած քաղբաժինների ղե-
կավարությամբ՝ ազնիվ աշխատելով իրենց
և իրենց կոլտնտեսությունների համար և
գողերից արթուն կերպով պահպաններով
իրենց բարեկը՝ արդեն կանգնել են ունե-
վոր կյանքի ճամբին և արդեն ոգտվում են
մթերքների առատությունից:

Գործը հիմա կայանում ենրանում, վոր-
պեսզի կոլտնտեսությունների հետագա ամ-
րացման պայքարի և աշխատանքի վորակը
բարձրացնելու հետ միասին, ինչպես հարկն

ե, բոլշևիկորեն լծվել կուլտուրական կյանքի
կարգավորման գործին կոլտնտեսություն-
ներում, վորպեսզի կոլտնտեսական ճակա-
տում հաղթահարել ուշացումը, վորպեսզի
Ազով-Սևվծովյան յերկրամասը դարձնել կուլ-
տուրական շինարարության առաջավոր յեր-
կրամաս:

Ազով-Սևվծովյան Յերկրգործկոմի պլե-
նումը 1933 թվի սեպտեմբեր ամսին՝ կուլ-
տուրական շինարարության մասին գյու-
ղում, հետեւյալ վորոշումը կայացըեց.

«Շրջգործկոմները և գյուղխորհուրդ-
ները քաղբաժինների հետ միասին սեր-
տորեն իրենց շուրջը համախմբելով
գյուղի կոլտնտեսային ամենալավ առա-
ջավոր տարրերին, փոխանցելով և ոգ-
տադործելով քաղբաժնի փորձն ու մե-
թողը, պետք ե բարձրացնեն կուլտու-
րական շինարարության գործը դնելով
նոր աստիճանի վրա, կազմակերպելով
այդ առթիվ բանվորներին, կոլտնտեսու-
թյան ակտիվին, ուսուցիչներին, դպրո-
ցականներին, պիտուններին և գյուղի
ամբողջ խորհրդային հասարակայնու-
թյան:

Պլենումն ընդգծում ե, վոր կուլտուրական ճակատում հետամնացությունը հաղթահարելու համար, պահանջվում ե վերին աստիճանի աշարջություն և կուլտուրական շինարարության այս կամ այն ֆրոնտում դասակարգային թշնամու կողմից սարքած վասների մերկացումը և ջախջախումը:

Բոլոր ուժերն ավելի շատ հառախամբելու և միացնելու, մասսաներին մարտական մորիլիքացիայի յենթարկելու նպատակով, Յերկրգործկոմի պլենումը վորոշում ե՝ կոլտիսիսություններում կուլտուրական կյանքի համար արշավ հայսարցել:

Դրանից յենելով՝ պլենումը փորոշում ե.

1. Կոլտնտեսականների ունեվոր կուլտուրական կյանքի համար պայքարելը պարտավորացնում ե գյուղաբորհուրդներին վճռական և ամենակարճ ժամկետում, ընթացիկ տարբա աշնանը, վերջ տալ միանգամայն անթույլատրելի յերեվույթներին, ինչպիսին են՝

ա) աղաղակող հակառողջապահություն, թափթփածություն և հասա-

րակական շենքերի կեղասառություն՝ գյուղաբորհուրդ, իրածիթ-ընթերցարան, ճաշարաններ, կոոպերատիվ կրպակներ, վարապետանոցներ, բաղնիքներ և այլն, և նույնպես ստանիցաների բնակելի շենքերի թափթփածություն.

բ) անմարզաբնակ տների և շենքերի քանդվելն ու ամեն կողմից թալանելը, պաղատու ծառերի և նոր տնկածների բարբարոսական վոչնչացումը և կոստանելլը.

գ) փողոցները, հրապարակները և ուղերը բացառապես մոլախոտերով ծածկվելլը.

դ) յեվ ճանապարհների, ամբարտակների, կամուրջների տեղ-տեղ բոլորովին անբավարար դրությունը և այլն:

Յերկրգործկոմի այս փորոշումը ամեն մի կոլտնտեսական պետք ե լավ հիշել, վորը պայքարում ե կոլտնտեսության ունեվոր կուլտուրական կյանքի համար. Հիշել, վոր անհիսանիտարական դրությունը, կեղտոտությունը յեվ բարիթփածությունը ունեվոր կրթուրական կյանքի բենամիներն են.

2. ԱՌՈՂՋ ԿՅԱՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կոլանտեսականը ունեվոր և կուլտուրական կյանք վարելու համար պետք է աղնիվ աշխատի: Իսկ բոլշեկորեն աշխատելու համար, պետք է լինել առողջ և աշխուժ: Առողջ և աշխուժ պետք են լինի նաև կուտնահասականի ընտանիքը:

Հիվանդ մարդը չի կարող լավ աշխատել: Առաջ չի գնում նաև աշխատանքն այն մարդու մոտ, փորի ընտանիքում հիվանդներ կան: Հիվանդությունը մնաս և հասցնում փոչ միայն իրեն՝ աշխատող կոլտնտեսականին՝ պակասեցնելով աշխորերի թիվը, այլև միանգամից հարվածում և ամբողջ կոլեկտիվին, փորովնետե ամեն տեսակի գործաքումը, փորի թվում նաև հիվանդությունը, արգելք են հանդիսանում ընդհանուր աշխատանքին, հետաձգում են պլանով նախատեսնված աշխատանքների ժամկետին կատարելը: Գյուղատնտեսության պարմաններում աշխատանքի յուրաքանչյուր ժամը թամնգ արժե: Առանձնասպես կարեվոր է, փոր աշխատանքի գնալը չվիճի, փոր աշխատանքի փորակը չվատանա և փորպեսզի

դրանով հենց չվատանգվի ունեվոր և կուլտուրական կյանքի իրագործումը:

Շատ դժվար ե պահպանել առողջությունն ու կենսունակությունը, յեթե ուշադրություն չդարձնել մաքրության, հանելիության լենի կարգ ու կանոնի վրա՝ թե կենցաղում, յեթ թե աշխատանիք ժամանակ:

Յեզ իրոք, ի՞նչն ե բոլորից առաջ աղդում մարդու առողջության վրա: Իհարկե այն պայմանները, փորի մեջ նա ապրում ե և աշխատում, իսկ այդ պայմանները զիսավորապես սրանք են:

1. Այն բնակարանը, փորի մեջ մարդն ապրում ե և աշխատում: Որինակ՝ տուն, խրճիթ, կոլտնտեսության վարչության, և գյուղխորհուրդի շենք, դաշտակայան, դարբնոց, արհեստանոց, դպրոց և այլն:

2. Սեփական մարմնի մաքրություն: Որինակ՝ լվացում, հագուստ, սպիտակեղեն, դուգարան (արտաքնոց), վարսավիրանոց:

3. Առարկաներ, փորոնց հետ մարդը գործ է ունենում: Որինակ՝ գյուղատնտեսական գործիքներ, անսառւն, հացահատիկ, խոտ և այլն:

4. Տարվա յեղանակը, փորի ընթացքում կատարվում ե աշխատանքը: Որինակ՝ ցուրտ, տաք, խոնակ, քամի և այլն:

5. Այն ամենը, ինչ վոր մարդ իր ներսն
է ընդունում: Որինակ՝ ող, վորով նա
չնչում ե, սնունդ, վորով նա ապրում ե,
խմիչք, վորը խմում ե:

Մինչև հոկտեմբերյան հեղափոխությունը,
աշխատավոր գյուղացիների առողջության
վրա զիսավորապես, կալվածատերերի և կու-
րակների ճորտացնող հարկերը բացասական
ե անդրադարձել՝ դուրս ծելով նրանցից
ամբողջ հյութը և պահելով նրանց կեղախ,
աղքատության և սովոր ճիրաններում: Նա
գյուղի չքավորների յերեխաների մեջ բավա-
կանաչափ մահացություն ե առաջացըրել: Նա
գյուղացիների առողջությանն այնպիսի
վնաս ե հասցրել, վոր չքավորների կեսից
ավելին, զինվորական ծառայության ժամա-
նակ անպետք ելին դուրս գալիս:

Ներկայումս կալվածատեր չկա: Համա-
տարած կողլեկտիվացման հիման վրա, կու-
րակությունը վորպես դասակարգ հիմնակա-
նում լիկիվդացիայի յե յենթարկված: Աճում
և ամրանում են բոլշևիկյան կոլտնտեսութ-
յունները: Կուսակցությունն ու կառավարու-
թունը կոլտնտեսականներին ոգնելու համար
գյուղ ուղարկեցին հազարավոր տրակտորներ,
կոմբայններ, հնձիչ և ուրիշ մեքենաներ:

Այսպիսով, գլխավոր պատճառները վոչն-
չացրված են, իսկ մնացածների հետ, վորոնք
խանգարում են կուլտուրական կյանքին,
դժվար չե պայքարել յեթե բոլոր կոլտնտե-
սականները պայքարի դուրս գան նրանց գեմ՝
պայքար աշխատանքի և կենցաղի առողջաց-
ման համար:

Առաջի հերթին մենք խստենք շենքի մա-
սին, վորտեղ մարդն ապրում և աշխատում ե:

3. ԲՆԱԿԱՐԱՆԸ ՊԵՏՔ Ե ՄԱԳՈՒՐ ԼԻՆԻ

Ամեն մի բնակարան, վորտեղ մարդիկ
ապրում և աշխատում են, առողջության հա-
մար շատ մեծ նշանակություն ունի: Մարդն
իր ամբողջ կյանքի մեկ յերրորդից մինչև կեսը
և ավելին անց ե կացնում բնակարաններում:
Շենքը՝ լինի գա տուն, խրճիթ, բարաք կամ
արհեստանոց, գործարան, մարդուն պահպա-
նում ե յեղանակներից՝ ցրտից, անձրեից,
ձյունից, քամուց: Մեր կլիմայական պայ-
մաններում, առանց բնակարանի, կես տա-
րուց ավելի չիկարելի վոչ ապրել և վոչ ել
աշխատել: Բնակարաններում հանգստանում
են, աշխատում են, սովորում են, ուտում են,

քնում են, վերջապես շենքերում պահպում են հասարակական և մարդու անձնական բարիքները: Ահա թե շենքը ինչքան պարտավորություններ ունի: Այստեղից պարզ է, վոր շենքերին պետք է նայել և աչքի լույսի պես պահպանել:

Բայց ցավոք սրաի, իրական կյանքում դա այնքան ել այդպես չե: Յես բախտ եմ ունեցել լինել մեր յերկրամասի շատ ստանիցաներում և գյուղերում, նստել կոլտնտեսականների վարչության շենքերում, ՄՏ կայանների գրասենյակներում և խանութներում, լինել դաշտակայայաններում: Բոլոր տեղերում, իհարկե, այդպես չե, բայց անտեր-անտիրականությունը և շրջապատի կեղաը դժբախտաբար, բավական ե: Իր թե մարդիկ չեն հասկանում այն ահռելի վնասը, վոր նրանք ստանում են կեղաից և անտիրությունից:

Պետք ետ ասել, վոր կոլտնտեսության բնակարանների մեծամասնությունը դեռ այնքան ել լավ չեն առողջության համար: Այդ բացատրվում ե նրանով, վոր մի շարք դարերի ընթացքում գյուղացիների ճնշող մեծամասնությունը աղքատ ե յեղել: Դրա համար ել բնակարանները այնպես են կառուցեր

ինչպես վոր ուժերը պատել ե, այսինքն՝ այնպիսի մեծությամբ, վոր ընտանիքը հազիվ ե տեղավորվել, իսկ հաճախ նաև անասուններին (ձմեռը): Այնպիսի նյութերից եյին կառուցում բնակարանները, վորն ավելի մոտ և ավելի եժան եր՝ կավ, գոմաղբ, հարդ, յեղեգն, իսկ անտառատեղերում փայտից, այնքան վոր տաքություն պահի և զլիններին չքանդվի: «Վոչ թե գերանալ, այլ գոնե ապրել» ասել ե աղքատությունից ծընված հին առածը: Այդպիսի «բնակարաններ» մեզ ժառանգություն են մնացել նաև ցարիզմից: Միայն կուլակությունը և ունեոր վերնախավլ եր, վոր լավ բնակարաններ եյին կառուցում:

Բժշկական գիտության տվյալներով, յուրաքանչյուր բնակչին հարկավոր ե մինչև 30 խորանարդ մետր բնակելի տարածություն, 9 քառակուսի մետր տարածություն և վոչ պակաս քան 3 մետրի բարձրությամբ կացարան: Գյուղերում սովորաբար յուրաքանչյուր մարդուն ընկնում և 4—6 քառակուսի մետր բնակելի տարածություն, 10—18 խորանարդ մետր ծավալով, իսկ բարձրությունը մեկ ձեռքաչափ: Այլ կերպ ասած, պարմանները յերկու անգամ վատ

են նրանց հանդեպ, ինչ անհրաժեշտ է առողջության համար:

Բժշկության կանոններով, բնակարաններում չի կարելի լվացք անել և կերակուր յեփել. խոնավությունն չառաջացնելու համար:

Չի կարելի կեղտու աշխատանքներ կատարել:

Գյուղական խճիթներում սովորաբար անում են թե մեկը և թե մյուսը. Նշանակում ե, հարկավոր ե առանձնապես ուշգրություն դարձնել բնակարաններին, վորպեսզի նրանք չկեղտուվեն և չփչանան. Առանց դրան ել կարելի յե լավ շենքերը փչացնել, իսկ վատ բնակարանները, ինչպիսին սովորաբար հանդիսանում են գյուղական տները, այնպիսի դրության կարելի յե հասցնել, վորտեղ դժվար և վնասակար և ապրել:

Ամեն մի կացարան սովորաբար կեղտու վում ե փոշուց և կեղտից, վորը փողոցից ներս ե բերվում կոշիկի, հագուստի և փոշոտած, կեղտուած առարկաների միջոցով։ Այդ փոշու և կեղտի մեջ մտնում են նաև խոնավ կամ չոր հողը, անասնաղը և կեղսուառթյունը։ Եենքի ներսի կեղտուության աղբյուր են հանդիսանում խոհանոցի դեն շպրտած ավելցուկները, կերակրի մեացորդ-

ները, փոշին, սարդի վոստայնը, վառելիքը: Բնակարանի ողը, դրանից բացի, ապական վում և նաև մարդկանց շնչով, չորացող հագուստեղենի ու կոշիկների գոլորշով ծխախոսի և վառարանի ծխով։

Հասարակական շենքերում՝ կոլտնտեսության վարչությունների գրասենյակում, բնակարանում, գյուղպարհորդում՝ վորտեղ հաճախակի հավաքվում են մարդիկ, թքում և անմիջապես կեղտուում են հատակը, վերջինիս վրա ձգելով գլանակի մեացած մասեր. Այդտեղ կուտակված աղբն սկսում ե արագ կերպով փառ և ապականել ողը. Կեղտի և աղբի մեջ ապրում և բազմանում են ամեն տեսակի բակատերիաներ, վորոնցից շատերն առաջ են բերում ծանր վարակիչ հիվանդություններ. Այսպես, որինակ, սենյակի աղբի մեջ տիֆի վարակը, արյունոտ լուծի վարակը և սիբիրյան ախալ կարող են 40 որից ավելի ապրել. Խոհանոցի գեն շպրտած ավելցուկների մեջ տիֆի և արյունոտ լուծի վարակը կարող են ապրել 4—5 որ։ Փոշու միջոցով տարվում ե սենյակը կեղտուության չորացած մասնիկը, չորացած խորխը։

Այս բոլորը գտնվում են սենյակի ողի մեջ, վորը մարդիկ շնչում են. սրանցով կեղ-

տոտպում եռ ուտելիքը, վորը մարդիկ ուտում
են: Բոլորովին պարզ ե, վոր այս ճանապար-
հով մարդիկ կարող են վարակվել և իրա-
կանում վարակվում են թոքախտով, արյու-
նոտ լուծով, սիբիրյան ախտով և ուրիշ լուրջ
ծանր հիվանդություններով: Աղբը, կեղար և
փոշին նույնպես հանդիսանում են ամեն տե-
սակի միջատների համար լավ պատասպարան
և սնունդ, գլխավորապես ճանձերի, լիերի,
փայտողիների (թախթարիթի) համար:

Ճանճին ապրում եռ մարդու անտեսու-
թյան և կացարանի շրջակայքում, վորովինետե
նա կերակրվում եռ մարդկանց ուտելեղենով
և զանազան նեխած, գեն շպրտած բաներով,
կեղտոսություններով և լեշերով: Այդ բո-
լոր դեն շպրտված ավելցուկները միաժա-
մանակ հանդիսանում են ճանձերի սիրած
տեղը, ձու ածելու համար: Գլխավորապես
նրանց համար պիտանի յե գոմաղը և առեն
տեսակի աղբը:

Թեև կարճ եռ ճանձերի կյանքը, բայց
նրանցից յուրաքանչյուրն իր կարճատե
կյանքի ընթացքում (ընդամենը մոտ մեկ
ամիս) ածում եռ մոտ 600 ձու: Յեթե հաշվի
առնենք այն հանգամանքը, վոր ապրիլից
մինչև սեպտեմբեր ամիսը ճանձերը փոխում

են 7—9 սերունդ, գուրս կգա, վոր նրանք
բազմանում են անսովոր արագությամբ:
Ճանձերի յուրաքանչյուր զույգը կարող ե
բազմացնել յերկունարյուր—յերեքհարյուր
հազար միլիոն հատ ապագա սերունդ, վո-
րոնք մեծ վնասներ են հասցնում:

Այն բոլորը, վորոնց վրա ճանճը նստում
ե, կպչում են նրա թաթիկներին. ղրա հա-
մար ել նա վարակիչ բակարիաների հետ
միասին փոխադրում ե կեղտոտ մասեր՝ ար-
յունոտ լուծի, ժանդախտի, տիֆի և ուրիշ
հիվանդությունների վարակներ: Դրանով
ճանճը վարակում ե մարդու ուտելիքը և
վերջինիս միջոցով փոխանցում ե վարակը:

Լվերը գլխավորապես լավ են զարգա-
նում աղբի մեջ, հատակների ձեղքերում,
ներքնատներում և այլն: Լվի թրթուրը կե-
րակրվում ե նեխած բույսի մնացորդներով:
Մեծ լվերը սնվում են անսասունների և մարդ-
կանց արյունով, փոխադրելով ամեն տե-
սակի յերկորդային հիվանդություններ և
կարող են վարակել ժանդախտով: Լվի յու-
րաքանչյուր խայթոցը թեև վարակիչ չե,
բայց և այնպես մարդկանց տհաճություն ե
պատճառում, ինչպես, որինակ՝ ցավ, քոր,
մրմուռ, կարասակարասակ և գրկում ե քնե-



լուց և հանգստությունից և խանգարում և
աշխատել:

Փայտօջիները (թախթաբիթի) լինում
են յերկու տեսակ՝ շիկակարմիր և սև: Պրու-
սական շիկակարմիր փայտօջիները շատ
աշխատ են լինում, վլստում են դիշեր ու ցե-
րեկ, իսկ սեերը, վորոնք ավելի մեծ են,
վլստում են միայն դիշերը: Թէ առաջնոր և
թէ յերկրորդը բազմանում են այնտեղ, վոր-
տեղ կան կերակրի, սննդի դեն շպրտած մա-
սեր, աղք, նույնիսկ՝ շոգ տեղերում: Նրանք
ուտում են ամեն տեսակի սննդով և այն-
քան չեն ուտում, վորքան աղտոտում են
և այսպիսով մարդկանց փոխանցում վարա-
կիչ հիվանդություններ:

Ավելի խոշոր վասարաներ՝ մկները և
առնետները, շենքերում նույնպես ընտելա-
նում են դեն շպրտած աղբերին, միասին
ուտում են բոլոր ուտելեղենները, ինչ վոր
վատ և ծածկված և տնտեսությանն անհա-
շիվ վաս են հասցնում:

Այսպիսով կեղար, աղքը, դեն շպրտած
անպետք բաները, անխնամք և միսթի վերա-
բերմունքը դեպի շենքն այնտեղ են հաց-
նում, վոր փչացնում են իրեն՝ ընթիթ, կեղ-
տում են ոդը, բնակություն են հաստառում

մակարույծ-միջաներ յեվ կրծողներ, առա-
ջանում են բակտերիաներ՝ ամեն տեսակի
ծանր նիվանդությունների աղբյուրներ, վո-
րոնցից, առաջին հերթին, սարապում են
յերեխաները, իսկ երանցից հետո նայեվ հա-
սակավորները:

Շատ վատ և անդրադառնում այն մարդ-
կանց առողջության վրա, վորոնք ապրում
են շենքերում և անխնամք վերաբերմունք
են ունենում դեպի պատուհանները և դրո-
ները: Մեր բնակարաններում պատուհան-
ներն այնքան ել մեծ չեն, վորի պատճառով
ել քիչ լույս և թափանցում: Անուշագիր վե-
րաբերմունքի հետևանքով պատուհանները
ծածկվում են փոշիով, կեղաստվում են և
լույսն այս անգամ ել ավելի քիչ և թա-
փանցում: Հաճախակի սենյակը քամհարելու
համար, պատուհանները ոդանցք չունեն:
Դոները վատ են փակվում և շատ անցքեր
ունեն: Անցքեր ունեն նաև պատուհան-
ները:

Քրա հետևանքով ոդը կամ մնում և յեր-
կար կանգնած, կամ, ընդհակառակը, առա-
ջանում են միջանցիկ քամիներ, կացարան-
ները ցրտում են, և այս բոլորն առաջաց-
նում և մրսական հիվանդություններ՝ գլ-

ըիպպ, հարբուխ, ականջների, ատամների
հիվանդություն և այլն:

Վերջապես կեղար, փոշին և անփությունը գեղի շենքը, վերին աստիճանի բացասական են անդրադառնում վոչ միայն մարդկանց, այլ նաև առարկաների վրա, փորոնք գտնվում են այդպիսի շենքերում: Խոնավության, փոշու և վերջինիս մեջ գտնված բակտերիայի ազդեցության առկ շենքերում բորբոսնում է հացը, փշանում ե հագուստեղենը և կոշկեղենը: Ճանձերը և փայտոջիները յերկար նստում են և կեղասուում: Արհեստանոցներում փոշին և կեղար փշացնում են մեքենաները և գործիքները:

Գլխափորը կայանում է նրանում, վոր մարդը բնակարանում շատ վաս ուշադրություն է դարձնում իր ուղապատի մահության յեվ կարգ ու կանոնի վրա, նույնը յեվ արտադրության մեջ: Վատ է նայում անասուններին, զյուղատնեսական գործիքներին, մեքենաներին: Վատ է նայում հասարակական սեփականությանը և դրանով հենց դառնում ե դասակարգային թըշնամու ձեռքին մի դործիք:

4. ԲԱԿԵՐԸ ՅԵՎ ՓՈՂՈՑՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ՆՈՒՅՆԴԵՍ ՄԱՖՈՒԻ ԼԻՆԵՆ

Շենքերում մաքրություն պահպանելը կախված է նաև նրանից, թե ինչ դրության մեջ են գտնվում բակերը և փողոցները, վորովճեան առաջին հերթին բնակարանների կեղար և փոշին այնտեղից ե գալիս:

ՄՏ կայանների անտեսությունների բակերը, կոլտնտեսությունն ամբողջապես, ըրիգագիները, դաշտակայանները և յուրաքանչյուր կոլտնտեսություն առանձին վերցրած մեծ նշանակություն ունեն: Բակերում տեղափորփած են տնտեսության համար անհրաժեշտ գոմեր, մարագներ, փարախներ և անսասունների համար գանազան շենքեր:

Ներկայումս յուրաքանչյուր կոլտնտեսական պետք է ունենալ կով, խով, թռչուն: Կուսակցությունն այդ վորոշել է և գա անշեղորեն կատարվում է: Հետեաբար, կենդանիների համար շենքեր կան և կլինեն յուրաքանչյուրի համար: Կոլտնտեսության վարչությունների, կոլտնտեսության ըրիգագիների և ՄՏ կայանների գյուղատնտեսական ինվենտարների համար, բակերում հատկապես շենքեր են շինված: Բակերը ամեն տե-

սակի նյութերի և առարկաների համար հանդիսանում են մշտական կամ ժամանակավոր պահետանոցներ: Բոլոր բակերում ջրհորներ կան, բակը հանդիսանում է անտեսական գործունեյության և կենցաղի կարեվոր մասը, և բակի գրության մասին կարելի յե դատել նրանով, թե մարդիկ ինչպես են ապրում և զեկավարում:

Փորձերը ցույց են տվել, վոր բակերի նկատմամբ մենք այնպես անփույթ ենք վերաբերվում՝ ինչպես կացարանի հետ: Բակերը վոչ միայն ծածկվում են մոլախոտերով, այլ և հաճախ լցված են կեղտով և անպետք իրերով: Բակերը լցվում են զանազան անպետք իրերով, գոմաղբի կույտով, հաճախսակի այնպիսի բաներով՝ ծույլ ձիավանների և անասնապահների շնորհիվ՝ վոր չես կարող գոմը կամ փարախը մտնել:

Արտաքնոցների և ախտահորերի գործը նույնպես լավ գրության մեջ չի գտնվում: Արտաքնոցը՝ դա բակի մի վորևե անկյունում յեղեգներով կամ հարդով ծածկված տեղ ե, իսկ ախտահորը՝ դա խորը չփորված բերանը բաց փոս ե: Հաճախ դործը համնում է մինչև այնտեղ, վոր կեղտուում են պա-

տահած տեղում և թափում են վորտեղ պատահի—խրճիթի յետեռում, մարագի յետեռում, թփերի տակ, և նույնիսկ ուղղակի դռան մոտ, պատշգամբի առաջ:

Իսկ այս բոլորի հետեւանքը լինում է այն, վոր ուրիշի բակով գնալ չես կարող, գլխավորապես գարնանը, աշնանը և ամառը, անձրևից անմիջապես հետո: Իսկ տաք յեղանակներին գրությունը նույնպես լավ չե, նեխումը և քայլքայումը ապականում ե ամբողջ ողբը: Աննշան քամու հետեւանքով փոշի յե բարձրանում և վերջինիս միջոցով կեղտի և աղբի չորացած բազմաթիվ մասնիկները տարածվում են ամեն տեղ: Ճանճերը նման գեղղերում իրանց շատ յերջանիկ են զգում: Բակերում աշխատող մարդիկ իրենց կոշիկների և շորերի միջոցով կեղտը և փոշին տարածում են ամբողջ շենքը: Բայց նրանք ամենուրեք տարածում են վոչ միայն կեղտն ու փոշին, այլև բոլոր վարակների սկիզբը: Հենց այդ նույն փոշին թափում ե ջրհորի մեջ, կամ բաց պատուհանով նըստում և կացարանում գտնվող բոլոր առարկաների վրա:

Վերջապես մաքրություն պահպանելու համար խոշոր նշանակություն ունի նույնպես

գյուղի փողոցների զբությունը: Նրանց վրա շատ քիչ ուշադրություն են դարձնում: Մեր գյուղերի և ստանիցաների փողոցներում հաճախ պատահում են փոսեր և առուներ, վորոնց մեջ սովորաբար յերկար ժամանակով կանգնած են մնում կիսահալ ձյունը և անձրևաշուրը՝ իրենց մեջ կրելով ամեն տեսակի բաներ: Քիչ չորանալու դեպքում, նրանք վերածվում են ջրափոսերի և փոքր ձահճուտների, վորոնք արագ կերպով նեխում և միջատների ու մալարիայի մոծակների համար հանդիսանում են հարմար տեղեր: Հաճախ՝ փողոցներում առանց ամաչելու շըպրտում են զանազան անպետք իրեր: Փողոցները շատ խայտառակ կերպով կեղտոտում են կենդանիները և նույնիսկ մարդիկ: Պարզ ե, վոր կեղտն ու փոշին այդպիսի փողոցներից փոխադրվում ե բակերը և կացարանները:

Փողոցի, բակի և կացարանի նկատմամբ ունեցած այդպիսի անփույժ վերաբերմունքը հանգում ե, վերջին հաշվով, մի բանի՝ անվերջ կեղտուրյուն այն տեղերում, վորտեղ ապրում յեվ աշխատու և մարդը յեվ մօսական վտանգ նրա առողջության համար:

5. ԻՆՉՊԵՍ ՊԱՅՄԱՐԵԼ ԻՐ ՇՐՋԱՊԱՏԻ ՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Պետք է փողոցից սկսել: Առաջուց հարկավոր ե փողոցը լավ հավասարեցնել, բոլոր խորդու բորդ տեղերը լցնել, քիչ թեքավուն, սահանքավոր անել և յերկու կողմից առուներ շինել: Այդ բանի համար լավ որինակ կարող ե ծառայել ՄՏ կայանների և խորհունտեսությունների կողմից անցկացվող կորընթատ խճուղային ճանապարհները:

Փողոցների այդպիսի ձևը հնարավորություն ե տալիս ջրերին արագ կերպով վերեկից հոսել և անձրևից հետո ցամաքացնել: Փողոցների յերկու կողմից պետք ե ծառել անկել, վորովհետև նրանք փողոցի յերկարությամբ տեղավորված բնակելի շենքերին շատ լավ պաշտպանում են փոշուց: Խըրձիթների առաջ պարտադիր կերպով պետք ե պարաեզներ գցել, այն հաշվով, վոր ծառերը չխանդակարեն պատուհանից ներս թափանցող լույսին:

Կոլտնաեսությունների վարչությունները պարտավորվում են հետեւ կոլտնաեսականների հողամասերում գտնված պարտեզների, բոստանների մաքրությանը և կազմակեր-

պել նշած տեղերից գոմազրի, աղբի, լեշերի
դուրս թափելու գործը:

Նրանք, ովքեր կփորձեն կտրատել և փը-
չացնել ծառերը և զբանով հենց ֆնաս հաս-
ցնել տնտեսությանը և կոլտնտեսականների
առողջությանը, նմանների դեմ պետք և ա-
նողոք պայքար մղել:

Բակերում անհրաժեշտ և խնդիրաբների
և մշտական ձիակապերի համար հատուկ տե-
ղեր պատրաստել և վոչ թե ցրվել բակով մեկ:

Մարազների, գոմերի, փարախների, ծած-
կոցների և այլ շինությունների առաջ հոդը
պետք է թեքաձեվ բարձրություն ունենայ յեվ
լավ տրոված, պնդացրած լինի, վորպեսզի
փոքրիկ լճակներ չառաջանան: Բակերում
բնակարանի գոնից սկսած մինչև գոմը, մարա-
զը, փարախը, ցախատունը, ջրհորը, արտաք-
նոցը և այլ հարկավոր տեղեր, պետք եւ անց-
կացնել փոքրիկ նանապարհներ՝ ավագով
յեվ քարե խիճով լավ պնդացրած: Իսկ բա-
կում ազատ մնացած հողամասը դարձնել
բոստան, ծաղկանոց, կամ թե խոտ ցանել՝
բնակարանը փոշուց և կեղտից պահպանելու
համար:

Չորային յեղանակների ժամանակ, բա-
կում հարկավոր եւ միշտ ջուր շաղ տար:

Բակերում անհրաժեշտ եւ աղբի համար
փայտե մեծ արկղ կառուցել, վորը ներսից
պիտի լավ ձյութված լինի և ունենա ամուր,
քիփ ծածկվող կափարիչ: Աղբը լցվելու գեպ-
քում, պետք եւ անմիջապես դուրս տանել և
թափել: Արկղի կողքերին աղբ չպիտի թափվի:

Վոչ մի գեպքում չի կարելի թաց և չոր
աղբը խառնել իրար, կամ ավելի ձիշտ՝ լցնել
միենույն արկղի մեջ: Անհրաժեշտ եւ հիշել,
վոր չոր աղբից մեծ ոգուտներ կարելի յե
ստանալ, որինակի համար, չոր աղբի կեսից
ավելին բաղկացած եւ լաթերից, թղթից,
վոսկորներից, ապակուց, թիթեղից և նման
առարկաներից, փորը կարելի յե ծախել
ինչպես ուսիլիումույթ (սուլուսարե):
Դրա համար ել նրանց հարկավոր եւ հավա-
քել հատուկ աեղերում:

Արտաքնոցներն այնպես պիտի կատու-
ցել, վոր չորս կողմից ծածկված լինեն, և
վոր գլխավորն եւ առանց ճեղքվածքների և
ծծող խողովակով: Շարունակ հետեւել նրա
մաքրությանը, սպիտակացնել և հաճախ կիր
կամ կարբուկա ցանել: Լվացքաջրերի համար
հատուկ փոսեր փորեր, այնտեղ հորել մի
մեծ տակառ, կապարիչով ծածկել և պար-
բերաբար դատարկել:

Զըհորների կողքի հողը պետք ե ջըհորների բերանի մոտից թեքաձև բարձր լինի և քարե խիճով լավ ամրացրած, վորպեսզի ջուրը փոքրիկ լճակներով չկանգնի և չծծվի ջըհորի մեջ: Ինքը՝ ջըհորը պետք ե ամուր կերպով ծածկվի կափարիչով:

Բակերում չի կարելի գոմաղբը յերկար ժամանակ կուտակված կամ պառկած թողնել: Նա սկսում ե նեխել, այրվել և վորպես վառելիք անպետքանում ե, միևնույն ժամանակ (գլխավորապես ձիու թրիքը) ճանճերի բազմացման համար շատ նպատականարմար տեղ ե հանդիսանում:

Ավելի լավ ե յուրաքանչյուր գոմի կամ փարախի գուան առաջ սւայլ ունենալ, անսունների տակը մաքրելուց անմիջապես հետո աղբը լցնել սայլի մեջ և ըստ նպատակահարմարության տանել և պարաբառնել բոստանները, ջերմոցները կամ դաշտերը:

Բնակարանի շեմքի առաջ, կոչիկները ցեխից մարեկու համար, անպայման յերկարե ենթիչներ դնել և կողքին ել մի բան քերիչը մաքրելու համար, վորովհետև նրա վրա այնքան ցեխ ե կուտակվում, վոր՝ կոշիկ մաքրելն այլևս անհնար ե դառնում: Միաժամանակ կոշիկները սրբելու համար

դուան առաջ փուած պիտի լինի դարման կամ խսիր:

Վոչ մի դեպքում չի կարելի վորպերի հետ կեղար տուն տանել: Դրա համար ել նախ քան սենյակ մտնելը, դռան առաջ պետք ե խողանակով զլխարկը, շորերը և կոշիկը ցեխից, փոշուց, ձյունից մաքրել և ապա ներս գնալ: Բնակարանում չի թույլատրվում նստել վերարկույով և զլխարկով: Ներս մըտար սենյակը թե չե, հարկավոր ե անմիջապես հանել վերարկուն, զլխարկը, կրկնուկոշիկը, (յեթե կարիք ե զգացվում) և կախել կախարանից:

Վորպեսզի բնակարանը չկաթի, առաջին հերթին պետք ե նորոգել կտուրը, հետո պատուհանների և դուների շրջանակները, վորպեսզի նրանք ամուր, քիփ ծածկվեն և ձեղքեր չունենան: Յեթե կացարանի հատակը փայտից ե, հարկավոր ե իր ժամանակին փակել և լցնել բոլոր ճեղքերը:

Անհրաժեշտ ե նաև սպիտակացնել բնակարանի առաստաղը, պատերը, վառարանը 20 տոկոս սպիտակ կը լուծույթով և ջրով լվանալ փայտե հատակը, վորից հետո շիել նավթի շորով: Այսպիսի բնակարան հավաքելը կվոչնչացնի լվերին և փայտոջիներին:

Հարկավոր ե ամեն որ հոգացողությամբ
սրել սենյակի առարկաները փոշուց և սարդի
վոստայնից, գլխավորապես անկյունները:
Սովորաբար կոլտնտեսականների մոտ սովո-
րություն ե դառել լուսանկարչական, կամ
այլ նկարները մեխել կամ խեժով փակցնել
պատերին: Նրանց յետևում կուտակվում ե
կեղար, փոշի յե նստում, փայտոջինները
բռւն են դնում և այն:

Այս բոլորից խուսափած լինելու համար,
ավելի լավ ե նկարները դնել շրջանակների
մեջ և ապա կախել շարժական կերպով, վոր
հնարավոր լինի հետագայում հանել և մաք-
րել:

Սենյակը հավաքելու ժամանակ, նույն-
պես անհրաժեշտ ե կահ-կարսափիքը տեղից
շարժել, վորպեսզի նրանց տակը և յետեր
աղբ չկուտակվի: Ինչ վերաբերում ե իրեն՝
կահ-կարսափիքին և պատուհանի ներքնա-
տախտակին, պետք ե թաց շորով սրբել:
Սենյակը մաքրելուց հետո, անհրաժեշտ ե
քամհարել: Պատուհանը պետք ե բոլորովին
չորացնել, նայմանավանդ ձմռանը:

Միջատներին վոչնչացնելու համար, սեն-
յակում վոչ մի գեպքում չի կարելի թողնել
աղբ, կերակրի մնացորդ, փշանքներ, դեն

շպրտված ավելցուկներ և վոր գլխավորն-
եր ուտելեղենը բաց թողնել չի կարելի:

Ամեն մի ուտելիք խնամքով պետք ե
ծածկել և հավաքել: Ամառ ժամանակ լավ
է, յեթե պատուհանները թանդիքե վարա-
գույրներ ունեն:

6. ԴԱՇՏԱԿԱՅԱՆՆԵՐԸ ՆՈՒՅՆՊԵՍ ՊԵՏՖ Ե ՄԱԳՈՒՐ ԼԻՆԵՆ

Դաշտակայաններում տաղավարները (բա-
րաք) պետք ե կառուցել հետևյալ կերպ:

Կոլտնտեսության կայանի տաղավարում
ապրողից յուրաքանչյուրը պետք ե զբաղե-
ցնի վոչ պակաս քան 15 խորանարդ մետր
տարածություն: Հատակը պետք ե գենակց
բարձր լինի, իսկ գրսից՝ տաղավարի
շուրջը պետք ե ասուներ փորել: Այս բոլորը
արգում եր նրա համար, վորպեսզի անձրեկի
կամ հեղեղի ժամանակ, տաղավարի ներսը
ջուր չլցվի: Պատերը և կտուրը պետք ե լավ
ամրացնել, վորպեսզի չկաթի և միջանցիկ
քամի չխաղա: Տաղավարը քամհարելու հա-
մար, անպայման հարկավոր և ողանց կամ
յետ ծալվող վերնապատուհան չինել:

Ինկատի ունենալով, վոր դաշտակայան-ներում մարդիկ ապրում են նաև տարվա ցուրտ յեղանակներին՝ վաղ գարնանը և ուշ աշնանը, հարկավոր ե մտածել վառելիքի մասին։ Ավելի լավ կլինի ժամանակավոր թիթեղյա վառարանի փոխարեն աղյուսե վառարան կառուցել, վորը միանդամայն ապահով ե հրդեհից, իսկ գլխավորը՝ շուտ չի սառում։

Դոների առաջ հարկավոր ե խոտ դնել, վորովիճակ դաշտային տաղավարներում կոլտնտեսականները մշատական չեն ապրում, ուստի նրանց համար պիտի բավական քանակությամբ թախտեր կառուցել։ Ամեն կերպ խոտափել ընդհանրական թախտեր շինելուց։

Սրտաքնոցները տաղավարից 20 մետր ներավորության վրա պետք է ըինել։

Դաշտային տաղավարների մաքրությունը փոչ մի բանով չպիտի տարբերվի սովորական կացարանի մաքրությունից։

Այն բոլորը, վորի մասին վերեռում խոսեցինք, առանց ծախքի և դժվարությունների, պիտի ամբողջովին իրազործել կյանքում։ Պետք ե միայն ուշադրությամբ հետեւ դրան և բարեխղճորեն կատարել։

Ուկրայինայի մի շաբք կոլտնտեսականներն արդեն որինակներ են ցույց տալիս, թե ինչպես պայքարել մաքրության համար։

Նրանք կազմակերպում են սոցիալիստական մըցակցություն և անց են կացնում կոնկուրս լավ տնտեսության, լավ կոլտնտեսության խրճիթի, փողոցի, գյուղի և այլի համար։ Ազով-Սևծովյան կողանտեսականներին ուղյանքն հարկավոր ե ամենավճռական պայքար մղել կացարանների մաքրության և կարգ ու կանոնի, բակերի, փողոցների, գյուղերի, խրճիթների և ստանիցաների համար։

7. ԻՆՉՊԵՍ ԻՆՔՆ ԻՐԵՆ ՀԵԶԵՎԵԼ

Առողջությունը պահպանելու համար ինքն իրեն հետեւելն այնքան կարևոր է, վորքան շրջապատի մաքրությունը։ Ինքն իրեն հետեւելու համար անհրաժեշտ է։

1. Մարմինը մաքրուր պահել.
2. Մաքրուր պահել շորերը և կոշիկները.
3. Անկողինը մաքրուր պահել.
4. Ռւտելիքը և խմելիքը կարգին պահել։ Մարմինը հետեւելը՝ մաշկին, մազերին,

ու փոշին և բոլոր վարակիչ միկրոբները, փորոնք գտնվում են անհաճելի, կեղտոտ հագուստեղենի մեջ, ուղիղ ճանապարհով հաղորդվում ե մաշկին: Բացի այդ, կեղտը հագուստեղենի մեջ փակում ե բոլոր ծակոտիները և գժվարացնում մաշկի շնչառությունը և քրանքի արտաթորումը:

Մարմինի մաքրության համար այդպիսի նշանակություն ունի նաև անկողինը՝ կեղտոտ բարձի յերեսը, սավանը, ներքնակը և վերմակը: Կեղտոտ յերեսսրբիչի միջոցով կեղտը քսվում ե մարմին, իսկ աչքի մեջ կա այնպիսի վարակ, ինչպես տրախոման ե:

Մարմինի վրա և հագուստեղենի մեջ զարդացող միջատները գոխանցում են վարակիչ հիվանդությունները՝ գլխավորապես բժագոր տիֆը:

Վոջիները լինում են յերեք տեսակ՝ գլխի, մարմի, և հագուստի: Գլխինն ապրում ե գլխի մազերի մեջ, վորտեղ անիծ ե դնում: Մարմինի վոջին ապրում ե մարմինացած մասերի մազերի մեջ: Հագուստինն ապրում ե սպիտակեղենի և շորերի ծալքերում:

Վոջիները շատ արագ են բազմանում: Մեկ — յերկու շաբաթից՝ եղ վոջիլը զուգա-

գորվելուց հետո, ածում են մոտ 200 ձու: Նրանցից արագ կերպով վոջիներ են առաջանում, հետո զուգավորվում են և ըսկում են նոր սերունդ առաջացնել: Վոջիլները գլխավորապես մնվում են մարդկային արյունով: Կծելով, նրանք պատճառում են ուժեղ քոր և մրմուռ և վոր գլխավորն ե, նրանք բծավոր արքով հիվանդ մարդու վրայից անցնելով առողջին, վերջինիս վարակում են նույն հիվանդությունով:

Այդ գործում վոջիներին ոգնում են վիայտօջիները, վորոնք նույնպես մնվում են կենդանիների և մարդու արյունով: Նրանք հատկապես բազմանում և գտնվում են կեղտոտ անկողիններում, վոր նույնիսկ չեն թողնում քնելու:

Կեղտոտությունից և տհաճությունից մաշկի վրա ծանր վերքեր են առաջանում՝ բշտիկ թարախ, քոս, բծեր և այլն: Պարզ ե, թե յուրաքանչյուր մարդ իրեն ինչպիսի խոշոր վնաս և տալիս՝ չհոգալով մարմին, հագուստի, անկողնի, յերեսսրբիչի մաքրության մասին:

Իրեն մաքրոր պահելու համար, այնքան ել իմաստություն չի պահանջվում, ի՞նչ և հարկավոր դրա համար:

Հարկավոր ե մարմինը նոզատարությամբ
սաք ջրով յեվ սապրօնավ (ոճառ) լվանալ:
Այսպիսով մենք մաշկից հեռացնում ենք
քրտինքը, ճարպային նյութերը, կեղար և
փոշին: Պետք ե ձեռքի և վոտքի յեղունդ-
ները կարն կտրել:

Հնարավորության սահմաններում, բայց
վոչ պակաս՝ քան հինգ որը մեկ անգամ, զլուխը
սապօնով կամ մոխրացրով լավ լվանալ:
Գլխի մազերի մեջ վոջիներ լինելու դեպ-
քում, պետք ե զլուխը նավթով լավ տրորել
և ապա լվանալ տաք մոխրաջրով:

Մարմնի մնացած մասերի մազերի մեջ
բուն դրած վոջիներին վոչնչացնելու հա-
մար, հարկավոր ե ղեղատնից կամ բժշկից
մնդիկի քսուցը (րդուտհայ մաՅԵ) ստանալ:
Հագուստեղենի ծալքերում ապրող վոջինե-
րին վոչնչացնելու համար, հարկավոր ե ան-
կողնի և հագնելու սպիտակեղենը լավ յե-
ռացնել: Իսկ հագնելու շորերը պետք ե ար-
դուկել տաք արդուկով: Ամբողջ սպիտակե-
ղենը, թե անկողնու, թե հագնելու և թե յե-
րեսորբիչը պետք ե շաբաթը մեկ անգամ
փոխել և լվանալ:

Վերնազգեստը, գլխարկը և կոշիկները
պետք ե խողանակով փոշուց մաքրել: Քը-

նելուց առաջ անկողինը պետք ե դուրս գր-
ցել և քամհարել, իսկ մահճակալը մաքրել
ամեն տեսակի միջատներից և փայտոջիլ-
ներից: Փայտե մահճակալիները հարկավոր ե
տաք ջրով լվանալ, իսկ յեթե նրանց արանք-
ներում բուն են դրել փայտոջիլիները, այն
ժամանակ պետք ե շփել նավթով կամ հինգ
տոկոսային կարբուկայի լուծույթով: Մահ-
ճակալների միջից փայտոջիլը կարելու հա-
մար, խորհուրդ ե արգում այրել մետաղա-
գոդիչ լապտերով (ոյալինայ լամո):

Ամբողջ մարմինը կեղախ մաքրելու ամե-
նալավ միջոցը բաղնիքն եւ Բայց վորպեսզի
դրանից մի վարեկ ոգուտ ստացվի, հարկա-
վոր ե բաղնիքը մաքուր պահել և խիստ հե-
տեւել ներքեռում բերած կանոններին:

1. Բաղնիքը պետք ե վոչ մի ճեղք չու-
նենա և հատակը մաքուր լվացված լինի:
Բաղնիքը պետք ե չոր վառելիքով վառել և
ծինելույզները փակել՝ կրակը ածուխ դառ-
նալուց հետո, Դրանից հետո բաղնիքը պետք
ե քամհարել: Այս բոլորը արգում ենրա հա-
մար, վորպեսզի բաղնիքում ածխանոտ չլինի:

Բաղնիքը պետք ե ծառայի վորպես լո-
դարանատեղ: Բաղնիքը չաշխատելու դեպ-
քում, խստիվ կերպով արգելվում ե այնտեղ

աւրիշ առարկաներ և կենդանիներ պահել՝
բաղնիքում չի կարելի սպիտակեղեն լվանալ:

3. Լողանալուց առաջ պետք ե տաք ջրով
շատ լավ լվանալ նստարանը և կիսադույլը
կամ թասը (լագան): Յուրաքանչյուրը պետք
ե ունենա իր նիլոպը (մոչալիան):

4. Բաղնիքում միայն առողջները պետք ե
լողանան: Խստիվ արգելվում ե բաղնիքում
գործածել զանազան տեսակի դեղորայք և քը-
սուցքներ: Մաշկի կամ վեներական հիվանդու-
թյուն ունեցող մարդիկ կարող են վարակել
առողջներին: Սրտի հիվանդություն ունեցող,
ինչպեսնաև մալարիայով և աչքի ու ականջի
հիվանդություն ունեցող մարդկանց բաղնի-
քում լողանալը վտանգավոր ե:

5. Մի քանիմները յերեխայություն են
անում և բաղնիքից անմիջապես դուրս են
վագում ցրտի և նույնիսկ ձյունի մեջ: Սը-
րանից կարող են ծանր հիվանդանար:

6. Լողանալուց հետո պետք ե մաքուր
սպիտակեղեն հագնել և փոշուց մաքրած վեր-
նազգեստ, ծայրահեղ դեպքում լողանալուց
ոգուտ չի ստացվի: Դաշտային պայմաննե-
րում պետք ե մի կերպ հարմարեցնել ջրցիր
(ծցալ) և աշխատանքից անմիջապես հետո
լվանալ մարմինը:

8. ՈՒՏԵԼԻՔԻ ՅԵՎ ԽՄԵԼԻՔԻ ՀՈԳԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Ուտելիքը և խմելիքը հանդիսանում են
գոյության և աշխատանքի համար առա-
ջին անհրաժեշտ մթերքը: Որգանիզմն ու-
տելիքից նյութեր ե ստանում գոյության
համար և ույժ՝ աշխատանքի համար:

Գլխավորապես կարեսը և հետևել մի
շարք կանոնների, վորպեսզի ուտելիքը գոր-
ծածելիս սնունդն որգանիզմին ոգուտ տա,
և վոչ թե վնասա և սկզ վնասը, և այն ել մեծ
վնասը, առաջանում ե այն ժամանակ, յերբ
ուտելիքը կեղտու, անվագուր ե լինում յեպ
մարդն ուտելիքի հետ միասին կու և տախու
գանազան վարակիչ բակտերիաներ:

Ուտելիքը յեվ ջուրը վա՞ր դեպքում ե կեղ-
տություն:

Ուտելիքը կեղտուավում ե բոլոր դեպքե-
րում, յեթե նա անխնամ ե թունված, ու-
րիշ խոսքով, յեթե նա վորեւ բանով ծած-
կված չի լինում: Այն ժամանակ ուտելիքի
բոլոր մթերքների վրա նստում ե կեղտ և
փոշի: Ավելի վտանգավորը ճանձերն ու մի-
ջատներն են, վորոնք աղտոտելով մթերք-
ները, զանազան կեղտությունների հետ-

միասին բերում են նաև վարակիչ բակտերիաներ:

Ուտելիքը կեղտոտվում ե նաև հենց իրեն՝ մարդու կողմից, ինչպես պատրաստելու, նույնպես և ուտելու ժամանակ:

Ճաշարանների, խոհանոցների անսարքությունը, վերնազգեստի կեղտոտ լինելը, խոհարարների, խոհարարուհիների և ուտելիքի հետ զործ ունեցող մնացած աշխատակիցների ձեռքերի կեղտը՝ հանդիսանում են ուտելիքի անմաքրության գլխավոր պատճառը: Կեղտոտառության տեսակետից պակաս նշանակություն չունեն նաև ներքնատների, նկուղների թափթփածությունը:

Չատ անգամ կերպիուր ուտելուց առաջ ձեռքերը չեն լվանում: Մարդը, վոր հենց հիմա զործ և ունեցել անսառնների հետ, և կամ ախտահանել ե ցորենը, աշխատել ե տրակտորի վրա, կեղտոտ ձեռքերով սեղան և նստում, հայ և վերցնում: Ուտիլիքի հետ միասին նա բերանն ե զնում մկնդեղ և թունավորում, վորին յես ինքս անձամբ ներկա յեմ յեղել: Ուտելիքի հետ միասին նա կուլ ե տալիս տիֆի, թանչքի (արյունոտ փորհարություն) բացիլները, վորի վորդի ձվիկները և այլն: Նույնը պատահում ե նաև ջրի հետ:

Զուրը մեր որդանիզմի՝ արյան, բջիջների և բոլոր մասերի անբաժան մասն ե կազմում: Մարդու մարմնի 65 տոկոսը կազմում ե ջուրը: Բացի այդ՝ բոլոր տեսակի ուտելիքներն իրենց մեջ պարունակում են մեծ քանակությամբ ջուր:

Մարդն իր ամբողջ կյանքի և աշխատանքի ընթացքում միշտ ել արտաշնչման ժամանակ գոլորշու, մեզի և քրտինքի միջոցով արտաթորում ե ջուր: Ջրի այդ կորուստը լրանում ե խմբչքով:

Ջրի պակասության հետևանքով մարդի իրեն շատ վատ ե զգում: ծարալում ե, չորանում և լեզուն, շրթունքները, կոկորդում անդյուրեկանություն ե զգում: Մարդն որգանիզմից 10 տոկոս ջուր կորցնելով՝ թեթև ցնցումներ և վոտքերի ցավ ե զգում, իսկ 20 տոկոս ջուր կորցնելով՝ մեռնում ե: Առանց ջրի, մարդը 5 որ ապրել չի կարող: Զուրը մարդու կյանքի հիմնական պայմանն ե:

Հենց դրա համար ել ջրի հետ պետք ե վարվել շատ զգուշաբար: Վատ ջուրը՝ կոշտ, պղտոր, կեղտոտ, անդյուրեկան՝ հսկայական վաս և հասցնում որգանիզմին:

Որգանիզմին գլխավորապես մեծ վաս ե տալիս այն ջուրը, վորի մեջ վարակիչ հի-

վանդությունների՝ ժանդախտի, տիֆի,
թանձքի և այլն միկրոբներ են լինում: Իսկ
դա հաճախ ե լինում, յերբ ջրին չեն նա-
յում, յերբ ջրհորները և ջրամբարները յա-
քաղի յեն թողնված, վորտեղ շարունակ
թափվում են անձրեի և ձյունի ջրերն՝ աղբի,
մեզի, գումաղի և այլ կեղտոտությունների
հետ:

Զուրը կեղտոտվում ե նաև բաքով, առ
կառով, դույլով տանելու ժամանակ, և վեր-
ջապես նրանից, յերբ բոլորը խմում են միհ-
նույն կեղտու ամանով: Այդպիսի անուշա-
ղիք վերաբերմունքից լավ չուրն անգամ կա-
րող ե որգանիզմի համար վնասակար լինել:
Ի՞նչ պիտի անել, վորպեսզի ուտելիքօք և
ջուրը մարդու որգանիզմի համար ոգտակար
լինեն:

Բոլորից առաջ ուտելու յեվ խմելու ծա-
մանակ ինեղ պես ե հետեւնս մաքրության:
Ճաշելուց առաջ ձեռքերդ անպայման ոճա-
ռով լվա: Ուտելու մեթեղքները պետք
ե շատ հոգասարությամբ պահպանել կեղ-
տոտվելուց, զլխավորապես փոշուց և մի-
ջատներից: Խորդանոցը, պահարանը, ներք-
նատունը կեղտու և փոշոտ չպիտի լինեն,
զրա համար հարկավոր ե շուտ-շուտ և խնամ-

քով մաքրել: Ուտելիքը կարելի յե փոխադրել
լավ սրբած կամ լվացած տարայով (պարկ,
աման, դույլ): Կանաչեղենը ուտելուց առաջ
պիտի ընտրել և լվանալ:

Ճաշարաններում, խոհանոցներում և այլ
տեղերում պատրաստած ուտելիքի մաքրու-
թյան համար խիստ հսկողություն սահմանել:
Ամեն կերպ հետևել, վոր ուտելիքի վրա կեղա,
փոշի չնստի և միջաների բազմացման տե-
ղիք չտա: Խոհանոցի մնացորդների և գեն
շպրտած անպետք բաների համար կառուցնել
աղբարկղ իր կափարիչով և յուրաքանչյուր
որ մաքրել այն: Ճաշարանների և խոհանոց-
ների խոհարանները, խոհարարուհիները և
այլ աշխատողները, պետք ե իրենց մաքրու-
պահեն և ունենան մաքրու վերնազգեստ:
Ամանեղենն անպայման տաք ջրով լվանալ:

Պակաս ուշադրություն չպիտի դարձնել
նաև ցամատակարարմանը: Ջրհորները սար-
քելու ժամանակ պետք ե պահպանել վոր
նրանք գոռաղբից, մեզից, սապոնաջրից և
այլն չկեղտոտվեն: Հենց այդ պատճառով
ել ջրհորները գոմից, մարագից, արտաքնոցից
և սապոնաջրի փոսերից պետք ե 20 սեռ
հեռու լինեն և ամուր կափարիչով ծած-
կվեն: Ջրհորների կողքին հարկավոր ե մըշ-

տական գույլ ունենալ: Զրհորի ջուրը չկեղառ-
տելու և չվարակելու համար, արգելվում է
ուրիշներին իրենց գույլերով ջուր հանել:

Զրի տակառները, դուլերը և բաքերը
պետք ե շատ հողատարությամբ լվացվեն և
ամուր ծածկվեն: Տակառները և բաքերը
անպայման ծորակ պիտի ունենան: Խստիվ
արգելվում ե տակառի, բաքի կամ գույլի
միջից գավաթով ջուր վերցնել և այդպիսով
ջուրը կեղտոտել: Զուր խմելու համար յու-
րաքանչյուրն իր գավաթը պիտի ունենա,
կամ թե նախքան ջուր խմելը ընդհանուր
գավաթը լավ լվանալ: Խստիվ արգելվում է
ուղղակի դույլից ջուր խմելը:

Այն գեպքում, յերբ ջուրը կասկածելի
յե (պղտոր, կեղտոտված և այլն) հարկա-
գոր ե յեփացըրած խմել:

Ուտելիքը լավ մարսելու համար առողջ
աշաւներ են հարկավոր: Իսկ կոլանտեսական-
ների մեջ մեծ քանակությամբ մարդիկ կան,
վորոնք հիվանդ կամ վչացած ատամներ
ունեն շնորհիվ վատ խնամքի՝ խմում են
շատ տաք կամ շատ սառը ջուր, թեյ և վոչ
մի անգամ ատամները չեն մաքրում: Հե-
տեւանքը լինում ե այն, վոր կերակրի մնա-
ցորդը ատամների արանքում մնալով, նե-

խում ե և հետագայում փչացնում ու քայ-
քայում ե ատամները:

Գետք ե սովորություն դարձնել ամեն ու-
տամեները խոզանակով յեվ ատամնափո-
փով լավ մաքրել:

9. ՀՈԴԱՏԱՐ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

Կոլանտեսականն իր աշխատանքի ըն-
թացքում հանդիպում ե հետեյալ վնասա-
կար յերկույթներին, վորոնք կարող են ազ-
գել նրա առողջության վրա, այն ե փոշին,
կեղտը, յեղանակը (առթ, ցուրտ, քամիներ,
անձրե) և ցեխոտվելը, վորն առաջանում է
անսասուններին նայելու ժամանակ:

Փոշու հետ նա գործ ունի գլխավորա-
պես բերքհավաքի և ցորենը չոր յեղանա-
կին ախտահաննելու ժամանակ: Թե առաջի
և թե յերկրորդ դեպքում փոշին նստում է
շորերի և մարմնի բաց մասերի վրա, գնում
և շնչափողը, լցում ե աչքերը և հաճախ
հիվանդացնում ե:

Վհասակար փոշու հետ գործ ունենա-
լիս՝ ախտահանման և առհասարակ ամեն

տեսակի փոշու աշխատանքներում պետք է հազնել հակափուային դիմակներ (ոդա- չնչային գործիք—recapitulation) յեզ հա- կափուային ակնոցներ: Աշխատանքը վեր- ջացնելուց անմիջապես հետո հարկավոր ե լողանալ կամ մարմինը թաց շորով շատ լավ շփել:

Տրակառորների, կոմբայնների և ուղիղ գյու- ղատնահամական մեքենաների վրա աշխատե- լիս ձեռքերը և մաշկը կեղառավում ե բեն- զինով և յուղով: Հետեանքը լինում ե այն, վոր մաշկն-սկսվում ե գրգռվել, փակվում են մաշկի բոլոր ծակոտիկները և սրանից ել առա- ջանում եմաշկի հիվանդություն: Դեպի որգա- նիքն ունեցած ուշադիր խնամքը լիապես պահպանում ե նման հիվանդություններից:

Կենդանիներին խնամելու ժամանակ, նրանցից կարող ե մարդուն անցնել զանա- զան տեսակի միջատներ և վարժեկիչ հի- վանդություններ, ինչպէսին՝ շնաձանձ, կովի ծաղիկ, բուրբունող սնկեր («գոնջ»), դա- բաղ, խլախտ, սիրիրյան ախտ, մալտայական ջերմ: Այս հիվանդություններից խու- սափած լինելու համար, բոլորից առաջ ան- հրածես ե հետեւվել, փորպեսզի կենդանի- ների խնամքը շատ մարդուր լինի: Մրանով

նախ չեն հիվանդանա կենդանիները և յեր- կրորդ՝ մուրդն ավելի ապահով կլինի վարակ- վելուց: Միենուույն ժամանակ չպետք ե մոռա- նալ սեփական մարմնի խնամքի մասին՝ ան- պայման լվանալ ձեռքերը և ամբողջ մարմինը:

Մրդեն խոսվել ե այն մասին, վոր որ- գանիզմի մեջ թափանցող վարակների ամե- նալավ պահապանը հանդիսանում ե ամ- բողջական, անվնաս մասերը: Ճանկուտված, ճմլված, թարմ վերքերի ժամանակ վարակը շատ հեշտությամբ ե թափանցում մաշկի միջից: Նամանավանդ մաշկի փիրավորված տեղերում բակուերիաները լավ են զարգա- նում, առաջացնելով բորբոքում, թարախա- կալում և այլն:

Դրա համար ել հարվածվոր ե հատուկ ուշադրություն դարձնել մաշկի վիրավոր- ված տեղերին և մախուր պամել այն: Քեր- ծված, ճանկուտված, կտրված, խայթված, ծակված տեղերը պետք ե յոդ կամ բրու- ֆերրոն քսել: Ավելի լուրջ գեպքում անմիջապես դիմել բժշկին կամ բուժակին՝ վեր- քերը փաթաթելու համար:

Հարկավոր ե լավ իմանալ, վոր աննշան վերքերը հաճախ կեղտոտավելով, յերկար ժամա- նակ մարդուն անաշխատունակ են դարձնում:

Ամառ ժամանակ, արեի տակ անդիխարկ աշխատելով, արեի ճառագայթները գանգի միջոցով թափանցում են ներս, գրգռում և սաստիկ տաքացնում են ուղեղը, վորից ել տոաջանում ե արեվի կաթված, վորը յերբեմն վերջանում ե մահով։ Արեի կաթվածից խուսափելու համար, արեի տակ զարելի յե աշխատել կամ լայնյեղը, թեթև զլխարկով, կամ մեկ ուրիշ սպիտակ գույնի զլխարկային ծածկոցով, վորովհետևսպիտակ գույնը (սպիտակ, դեղին, կանաչ) իր մեջ չի ընդունում արեի ճառագայթները։

Արեի կաթված պատահելու դեպքում հարկավոր ե անմիջապես կաթվածահարին փախողին ստվեր տեղ յեվ վրան ջուր լցնել։

Ամառն աշխատելիս մեծ նշանակություն ունի խմելիքը։ Ըսդհանրապես տոթ ժամանակ մարդը շուտ ե քրտնում։ Աշխատանքի որվա ընթացքում քրտնքի արտաթորումը հասնում ե 8—12 լիտրի։ Այդպիսի քրտինքն իհարկե, շատ լավ բան ե, վորովհետև մարմի միջից դուրս ե գալիս ավելորդ ջերմաթյունը և դրանով հենց ազատում ե մարդուն սաստիկ տաքանալուց։ Քրտինքը մարմից հեռացնում ե նաև զանազան վնասակար նյութեր, բայց միաժամանակ և այն-

պիսիները, վորոնք որգանիզմի համար ոգտավետ են։ Ինչպես, որինակ, քրտնքի հետ գուրս յեկած աղը, վորից հաճախ մարմինն որական կորցնում ե մինչև 50—60 գրամ։ Իսկ աղը մարդու առողջության համար շատ անհրաժեշտ ե։

Դրա համար ել խորհուրդ ե տրվում սովորական ջրի փոխարեն խմել քիչ աղի ջուր, կամ ուտել ուրիշ աղի ուտելիքներ։ Այս մասին դորձարաններում փորձեր ե կատարվել ամենատաք աշխատանքի ժամանակ և լավ հետեանքներ ե տվել։ Թեև առանձնապես ծարավը չի սաստկանում, բայց որգանիզմը քրտնքի հետ արտաթորած աղը կը կին յետ ե ստանում և մարդն իրեն շատ լավ ե զգում։

Հագուստը մարդուն պաշտպանում ե ցրակց և անձրեկց։ Դաշտակայաններում, անձրեկց թթված հագուստի և կոշիկների համար պետք ե չորացնելու տեղեր պատրաստել, վորովհետև բնակարաններում շորեր չորացնելու դեպքում կեղաստվում ե ողը։

Ահա այն հիմնական կանոները, վորոնք ամեն մի կոլտնեսական պետք ե իմանալով կատարի, վորպեսզի պահպանի իր առողջությունը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Արշավ կուլտուրական կյանքի համար կոլտնտեսությունում	3
2. Առողջ կյանքի գլխավոր պայմանները	8
3. Բնակարանը պետք և մաքուր լինի	11
4. Բակիրը և փողոցները նույնպես պետք և մաքուր լինեն	21
5. Ինչպես պայքարել իր շրջապատի մաքության համար	25
6. Գաշտակայանները նույնպես պետք և մաքուր լինեն	31
7. Ինչպես իրեն իրեն հետեւել	33
8. Ուսելիքի և խմելիքի հոգատարությունը	41
9. Հոգատար վերաբերունք աշխատանքի ժամանակ	47



ՀՀ Ազգային գրադարան



NL0270511

40
Цена 40
ЧПЯ.
Коп.

1061

3886

1
2)

27. XII. 1964

На армянском языке

Доктор М. С. Понизовский

ОЗДОРОВИМ ТРУД И БЫТ
КОЛХОЗНИКА

АЗОВО-ЧЕРНОМОРСКОЕ
КРАЕВОЕ КНИГОИЗДАТЕЛЬСТВО

7-80-70-26882

ՈՂՈՏՈՎ-ԴՊԽ ՄՈՍԿՎԱԿԱՑՎԱԾ ՓՈՂ. № 58
ԳՐԱԿԵՆՈՒԹՈՒ (ԿԱԿՊՈՅԵՆՏՐ)